

**Ֆինանսական օժանդակություն Providence-ում.**

Հավատարիմ մնալով մեր առաքելությանը և հիմնական արժեքներին՝ Providence Health & Services ծրագիրը հոգ է տանում մարդկանց և նրանց առողջապահական կարիքների մասին՝ անկախ նրանց վճարունակությունից: Մենք հանձնառու ենք աշխատել մեր հիվանդների հետ ցանկացած ֆինանսական խնդրի դեպքում, այդ թվում նաև՝ ուղիներ գտնել, որպեսզի բուժօգնությունը դառնա ավելի մատչելի: Providence-ի հիվանդանոցները ֆինանսական օժանդակություն են առաջարկում այն համապատասխանող հիվանդներին, ովքեր ֆինանսապես ի վիճակի չեն վճարելու իրենց բուժման հաշիվները: Եթե դուք ունեք Ձեր բուժօգնության ամբողջ կամ որոշ մասի համար վճարելու հետ կապված խնդիր, ապա մենք Ձեզ խորհուրդ ենք տալիս խոսել Providence ֆինանսական խորհրդատուի կամ մեր գրասենյակից որևէ մեկի հետ՝ հասկանալու համար ինչպես կարող ենք Ձեզ օգնել:

**Ինչ է ընդգրկվում:** Providence հիվանդանոցներում շտապօգնության կամ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունների համար մենք համապատասխանող հիվանդներին տրամադրում ենք ֆինանսական օժանդակություն ճկուն սակագնային սանդղակի հիման վրա, ըստ վճարունակության կատարելով գեղչեր 75-ից 100%-ի սահմաններում: Այլ ծառայությունների կամ մեր ոչ-հիվանդանոցային հաստատություններում մատուցվող ծառայությունների դիմաց տրամադրվող ֆինանսական օժանդակությունը ղեկավարվում է բուժօգնությունն ապահովող տվյալ Providence հաստատության քաղաքականությամբ:

**Ինչպե՞ս դիմել:** Ցանկացած հիվանդ կարող է դիմել ֆինանսական օժանդակություն ստանալու համար: Ֆինանսական օժանդակության կարիք ունեցող հիվանդը պետք է տրամադրի դիմումի մեջ նշված ուղեկցող փաստաթղթեր, եթե Providence-ն այլ բան չի նշում: Դիմումի ձևաթուղթը կարելի է ձեռք բերել առցանց, հեռախոսով կամ ստորև նշված կայքէջի կամ էլեկտրոնային հասցեի միջոցով:

**Այլ օժանդակություն:**

**Ընդգրկվելու օժանդակություն:** Եթե Դուք բժշկական ապահովագրություն չունեք, ապա կարող եք ընդգրկվել կառավարության կամ համայնքային այլ ծրագրերում: Մենք կարող ենք Ձեզ օգնել՝ բացահայտելու, թե արդյոք այս ծրագրերը (ներառյալ՝ Medicaid և Veterans Affairs նպաստները) կարող են օգնել փակելու Ձեր բուժման հաշիվները: Մենք կարող ենք նաև օգնել Ձեզ՝ դիմելու այս ծրագրերին:

**Չապահովագրված գեղչեր:** Providence-ը գեղչ է առաջարկում այն հիվանդներին, ովքեր հնարավոր է, որ բժշկական ապահովագրություն չունեն: Խնդրում ենք կապվել մեզ հետ՝ մեր գեղչային ծրագրին ծանոթանալու համար:

**Վճարային պլաններ:** Ձեր ապահովագրական ընկերության կողմից հաշվին ընթացք տալուց հետո Ձեր կողմից պարտք հանդիսացող ցանկացած գումարային մնացորդ պետք է վճարվի երեսուն օրվա ընթացքում: Մնացորդը կարող է վճարվել հետևյալ ցանկացած եղանակով. ավտոմատ վարկային քարտ, վճարային պլան, կանխիկ, չեք, առցանց հաշվի վճարում կամ վարկային քարտ: Եթե Դուք վճարային պլանի կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել Ձեր վճարման քաղվածքի վրա նշված համարով՝ պայմանավորվելու համար:

**Շտապ օգնություն:** Providence հիվանդանոցները, որոնք ունեն հատուկ նշանակությամբ շտապ օգնության բաժանմունքներ, տրամադրում են բուժօգնություն արտակարգ բժշկական իրավիճակների համար (ինչպես սահմանված է Emergency Medical Treatment and Labor Act-ով) առանց առկա կարողությունների խտրականության,, առանց հաշվի առնելու, արդյոք հիվանդը վճարունակ է, թե՞ ոչ, կամ համապատասխանում է ֆինանսական օժանդակություն ստանալու համար:

**Կապվեք մեզ հետ՝ ֆինանսական օժանդակության օգնության կամ դիմումների համար**  
Providence բժշկական հաշիվների վերաբերյալ օգնություն ստանալու մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել կամ այցելել ֆինանսական խորհրդատուի կամ Ձեր տեղական Providence հաստատության վճարումների ընդունման գրասենյակ: Մենք կարող ենք տրամադրել Ձեզ անհրաժեշտ ցանկացած ձևաթուղթ և կարող ենք օգնել Ձեզ դիմելու օժանդակության համար: Հիվանդներին վստահորեն խրախուսում ենք հնավորության դեպքում դիմել ֆինանսական օգնության համար նախքան բուժօգնություն ստանալը: Հիվանդները կարող են նաև դիմել ցանկացած ժամանակ՝ բուժում ստանալիս կամ Ձեր սկզբնական հաշիվը ստանալուն հաջորդող ժամանակահատվածում:

Եթե որևէ հարց ունեք կամ ցանկանում եք ֆինանսական օժանդակության դիմումի ձևաթուղթ ստանալ, խնդրում ենք կապվել ստորև ներկայացված՝

- հեռախոսահամարով՝ 1-866-747-2455
- մեր կայքէջի միջոցով՝ [www.providence.org](http://www.providence.org)